ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հունիսի 2011թ. **N__-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Արցախի փողոցի հ.8ա շենքի հ.31՝ 69.5քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 04.05.2008թ. հ.2283961 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գայանե Մկրտչյանին և Միլենա Աբրահամյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էրեբունու շրջխորհրդի գործկոմի 15.09.1994թ. հ.35/34 որոշմամբ Արցախի փողոցի հ.8ա շենքի հ.31 բնակարանը մասնավորեցվել է Ֆիլիզ Ռուբենի Մնացականյանին: Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի 29.12.2007թ. 2-1453-2007թ. վճռով անվավեր է ճանաչվել Էրեբունու շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 15.09.1994թ. հ.35/34 որոշումը՝ Արցախի 8ա շենքի հ.31 բնակարանը որպես ընդհանուր համատեղ սեփականություն Ֆիլիզ Մնացականյանին, Նիկոլայ Մկրտչյանին, Գայանե Մկրտչյանին և Գուրգեն Աբրահամյանին սեփականաշնորհելու մասին և, կիրառելով վիճահարույց գործարքի անվավերության հետևանքները, չեղյալ է համարվել 06.10.1994թ. ՇՇԱԳՎ-ի կողմից նշված բնակարանի նկատմամբ Ֆիլիզ Մնացականյանի, Նիկոլայ և Գայանե Մկրտչյանների ու Գուրգեն Աբրահամյանի անվամբ կատարված իրավունքների պետական գրանցումը, ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի Էրեբունու տարածքային ստորաբաժանման կողմից 28.10.2004թ. 4-Է-32 մատյանի 087 համարի տակ Մայիս, Գայանե, Նիկոլայ Մկրտչյանների ու Գուրգեն Աբրահամյանի անվամբ Արցախի 8ա շենքի հ.31 բնակարանի նկատմամբ կատարված իրավունքների պետական գրանցումը (սեփականության վկայական 1550202) և 06.12.2005թ. ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի Էրեբունու տարածքային ստորաբաժնման կողմից 01-005-004-015 մատյանի 296 համար տակ բնակարանի նկատմամբ Գայանե և Նիկոլայ Մկրտչյանների ու Գուրգեն Աբրահամյանի անվամբ կատարված իրավունքների պետական գրանցումը:

Համաձայն Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 23.03.2011թ. հ.24/1-8/107/254 գրության՝ ներկայումս Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում քաղ. գործն ըստ հայցի Էրեբունի թաղապետարանի (հետագայում՝ Երևան համայնքի) ընդդեմ Գայանե Մկրտչյանի և Գուրգեն Աբրահամյանի՝ բնակարանից վտարելու և ըստ հակընդդեմ հայցի՝ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքը ճանաչելու և որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Վերը նշված հասցեի բնակարանի՝ Երևանի Օրջոնիկիձեի շրջխորհրդի գործկոմի կողմից 24.04.1970թ. տրամադրված հ.6806 միասնական օրդերում նշված է նաև Գայանե Մկրտրչյանի անունը:

Փաստորեն, Գայանե Մկրտչյանը շարունակել է բնակվել Արցախի փողոցի հ.8ա շենքի հ.31 բնակարանում, սակայն համաձայն բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 087118 տեղեկանքի՝ վերջինս 25.01.2010թ.-ից իր դստեր՝ Միլենա Աբրահամյանի հետ փաստացի հաշվառվել է վերը նշված հասցեում, իսկ համաձայն հարևանների 21.12.2009թ-ի հայտարարության հիման վրա համատիրության կողմից տրված տեղեկանքի՝ 2000թ.-ից մինչ օրս անչափահաս աղջկա հետ միասին բնակվում է տվյալ բնակարանում:

«Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ